Սպառողական վարկի համար պահանջվող փաստաթղթեր

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ վարկառուի կամ համավարկառուի կողմից, դիմումը ներկայացնելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

1. Վավեր անձնագիր կամ նույնականացման քարտ

2. Եկամտի վերաբերյալ տվյալներ

- Եթե վարկառուն վարձու աշխատող է.
    - Գործատուի կողմից տրամադրված աշխատավարձի տեղեկանք, որը ներառում է տվյալներ գրանցված և զուտ աշխատավարձի մասին, աշխատակցի զբաղեցրած պաշտոնը և աշխատանքային տարիների թիվը (կամ աշխատավարձի տեղեկանք ըստ ԲԲԱ-ի օրինակի)
- Եթե վարկառուն ինքնազբաղված է
    - Հարկ վճարողի հաշվառման վկայականը
    - Անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայագիրը
    - Գործունեության իրավունքը հավաստող փաստաթուղթ (եթե առկա է)
    - Գործունեության հասցեն հավաստող փաստաթուղթ (վարձակալության պայմանագրի կամ սեփականության վկայականի պատճենը)
    - Նախորդ 1 տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից; ընթացիկ և նախորդ տարվա հաշվեկշիռը կամ եկամտի այլ հիմնավորում
    - Եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ (գրառումներ) նախորդ 1 տարվա համար
    - Եկամտի հայտարարագրեր վերջին 2 տարվա համար
    - Բոլոր տեսակի գործող հաշիվների շրջանառության վերաբերյալ տեղեկանք՝ հաստատված համապատասխան բանկի պատասխանատու անձանց ստորագրությամբ և կնիքով (ցպահանջ)
- Եթե վարկառուն հանդիսանում է բաժնետեր
    - Պետ. ռեգիստրի կողմից տրված՝ բաժնետերերի/մասնակիցների վերաբերյալ տեղեկանք

3. Անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթեր (եթե սպառողական վարկը տրամադրվում է անշարժ գույքի գրավի դիմաց)

- ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված միասնական տեղեկանք, որի տրամադրման վաղեմությունը պայմանագրի նոտարական վավերացման պահին չպետք է գերազանցի 15 աշխատանքային օրը;
- ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված սեփականության վկայական, որը փաստում է սեփականատիրոջ սեփականության իրավունքը, պարունակում է անշարժ գույքի նկարագրությունը և գծապատկերը; Սեփականության վկայականի հիմքերը
- Գնահատման հաշվետվությունը
- Անշարժ գույքի ձեռքբերման հիմք հանդիսացող փաստաթղթեր

Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր:

Ուշադրություն: Համավարկառուի առկայության դեպքում պետք է ներկայացվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են դիմորդից: